ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ

т. XXII, № 11, 1969

ԽՐՈՆԻԿԱ

ՊՐՈՏՈԶՈՈԼՈԳՆԵՐԻ 3-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԸ

1969 թ. հուլիսի 2-ից մինչև 10-ը Լենինգրադի Թավրիկյան պալատում տեղի ունեցավ պրոտոզոոլոգների 3-րդ միջազգային կոնգրեսը։

1-ին կոնգրեսը, որը կազմակերպվել էր Չեխոսլովակիայի գիտությունների ակադեմիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների պրոտոզոոլոգների միության նախաձեռնությամբ, կայացել է 1961 թվականին Չեխոսլովակիայի մայրաքաղաք Պրագայում։ Այնտեղ էլ որոշում ընդունվեց պարբերաբար (4—5 տարին մեկ) հրավիրել պրոտոզոոլոգների կոնգրես։

Այդ որոշման համաձայն 1965 թ. Լոնդոնում կայացավ 2-րդ կոնգրեսը և որոշում ընդունվեց 3-րդ կոնգրեսը հրավիրել Լենինգրադում։

Լենինգրադյան կոնգրեսի աշխատանքներն ընթացան գիտական բարձր մակարդակով և ջերմ բարեկամական մթնոլորտում։ Այդ աշխատանքներին մասնակցում էին աշխարհի 36 տարբեր երկրների 641 գիտնական, որոնց թվում հայտնի գիտնականներ Պոլյանսկին, Մոշկովսկին (ՍՍՀՄ), Ժադենը (Բելգիա), Գարնեմը (Անգլիա), Խոլը (ԱՄՆ) և ուրիշներ։

Առանձնապես բազմամարդ էին ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի պատվիրակությունները։ ՍՍՀՄ-ի պատվիրակությունը կազմված էր միութենական բոլոր 15 հանրապետությունների ներկայացուցիչներից։

Համեմատաբար կարճ այդ ժամանակաընթացքում լսվեցին շուրջ 500 զեկուցումներ և հաղորդումներ, որոնք նվիրված էին նախակենդանիների գենետիկայի, ենթակառուցվածքի, ցիտոքիմիայի, ցիտոգենետիկայի, բիոքիմիայի և այլ արդիական հարցերին։

Հայաստանի գիտնականները նույնպես հանդես եկան կոնգրեսում մի շարք հաղորդումներով։ Վ. Միքայելյանի, Է. Դասպարյանի (ՀՍՍՀ ԳԱ փորձառական կենսաբանության ինստիտուտ), Մ. Համբարձումյանի (Երևանի բժշկական ինստիտուտ), Վ. Խաչոյանի (ՀՍՍՀ ԳԱ Փորձառական կենսաբանության ինստիտուտ) և ուրիշների ելույթները մեծ ուշադրությամբ լսեցին կոնգրեսի մասնակիցները։

Կոնգրեսը նշեց, որ ներկա դարը կենսաբանության դար է, քանի որ մեր օրերում բուռն կերպով ու մեծ թափով զարգանում են կենսաբանական գիտությունները, այդ թվում նաև պրոտոզոոլոգիան։ Կենսաբանության այս մասնաճյուղն զբաղվում է նախակենդանիների բազմակողմանի ուսումնասիրությամբ, որոնք, ինչպես հայտնի է բջջային մակարդակի վրա գտնվող օրգանիզմներ են, և, հետևաբար, տեսական մեծ հետաքրքրություն են ներկայացնում ինչպես կենդանաբանության, այնպես էլ բջջաբանության համար։ Այս գիտությունը նաև բացահայտում է բջջի էվոլյուցիոն հնարավորությունները և միաժամանակ, մարդկության համար մեծ գործնական նշանակություն ունի, քանի որ նախակենդանիներից շատերը մարդու և կենդանիների (այդ թվում հների ու օգտակար միջատների) բազմաթիվ հիվանդությունների հարուցիչներն են հանդիսանում։

Նախակենդանիները նաև կեր են հանդիսանում ձկների համար սրանց զարգացման որոշ փուլում և, բացի այդ, օգտագործվում են որպես ինդիկատորներ ջրավազանների մաքրության աստիճանը որոշելու ժամանակ և որպես վնասակար միջատներին ոչնչացնելու միջոցներ։ Նախակենդանիների դերը մեծ է նաև երկրագնդի հողաշերտի կազմավորման պրոցեսում։

Զեկուցումների ու հաղորդումների թեզիսները հրատարակվել են ռուսերեն, անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուներով։

Կոնգրեսը որոշում ընդունեց պրոտոզոոլոգների 4-րդ միջազգային կոնգրեսը գումարել Ֆրանսիայում, 1973 թվականին։

Վ. Ի. ԽԱՉՈՅԱՆ